FPV ԴՐՈՆՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱԿԻ ԵՎ ԽՈՒՍԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

FPV-դրոնի գրոհի ժամանակ մարտիկի գործողությունների մի քանի հիմնական և հստակ խորհուրդ:

Հակառակ տարածված կարծիքի, բաց տեղանքում FPV դրոնի միջոցով բարձր արագությամբ մեկ մարդկային օբյեկտին ճշգրիտ հարվածելը բավականին դժվար է, նույնիսկ փորձառու օպերատորի համար: Սովորաբար, մեկ թիրախը ոչնչացնելու համար հակառակորդի FPV դրոնի օպերատորը փորձում է կամ հարվածել անշարժ թիրախին (օրինակ՝ դրոնի վրա կրակող զինվորի), կամ հարվածել կանխատեսելի հետագծով շարժվող թիրախին (օրինակ՝ փախչող զինվորի մեջքին): Հետևաբար, երբ զինվորի վրա հարձակվում է հակառակորդի FPV դրոնը, կարևոր է փոխել ԱԹՍ-ի հետագիծը՝ կատարելով տարբեր խուսավարումներ և կտրուկ նետումներ: Այդուհանդերձ, միայն խուսավարումները, անկախ նրանից, թե դրանք ինչպիսին են, թույլ չեն տա փախչել FPV դրոնից, որը կարող է ուղիղ գծով զարգացնել մոտ 110 կմ/ժ (այսինքն՝ մոտ 30 մ/վ) արագություն:

Բաց տեղանքում, որտեղ հնարավոր չէ պատսպարվել, անհրաժեշտ է խուսավարում կատարել միայն այն բանի համար, որպեսզի, դժվարացվի հակառակորդի FPV դրոնի օպերատորի աշխատանքը, դրանք (խուսավարում-

ները) համատեղելով դրոնի ուղղությամբ կրակ վարելու հետ: Խուսավարելը (այսինքն՝ կտրուկ նետումները և անկանխատեսելի հետագծով շարժվելը) ստիպում է հակառակորդի դրոնի օպերատորին ընտրել թիրախին հարվածելու օպտիմալ անկյունները՝ դրոնը բերելով մեկ այլ հետագիծ՝ միաժամանակ նվազեցնելով արագությունը:

Դրոնը հեռացումը և դրա արագության նվազեցումը հնարավորություն է տալիս շահել մի քանի վայրկյան, որի ընթացքում անհրաժեշտ է կամ ավելի շահավետ դիրք գտնել, կամ փոխել պահեստատուփը, կամ նշանառու կրակ բացել դրոնի ուղղությամբ առավել շահավետ պահին՝ կողային շրջադարձի պահին, երբ դրոնը, փոխելով իր թռիչքի հետագիծը, մի փոքր կախելով նվազեցնում է արագությունը:

Կրակ վարելիս հատկապես կարևոր է չտարվել չափից շատ և հիշել, որ FPV դրոնի վրա կրակելը նաև ստիպում է դրա օպերատորին խուսափողական գործողություններ ձեռնարկել: Հետևաբար, դուք պետք է օբյեկտիվորեն գնահատեք ձեր հմտության մակարդակը և խուսափեք կրակ բացել այնպիսի հեռավորությունից, որտեղից անհնար է խոցել ԱԹՍ-ին, քանի որ ձեր փամփուշտների վատնումը, որոնք միշտ սահմանափակ են, կարող է հակառակ արդյունքը տալ:

Եթե բաց տեղանքում շրջակա պայմանները ենթադրում են, որ հնարավոր է շարժվել դեպի դրոնի բարձր արագության զարգացումը խոչընդոտող վայր (օրինակ՝ տնկարաններ, մացառուտներ), որտեղ դրոնի ազատ թռիչքը դժվար կլինի, ապա կարևոր է խուսավարումն իրականացնել հենց այդպիսի վայրի ուղղությամբ, որտեղ կրակի և խուսավարման համադրությունը բավականին մեծ շանսեր կտան FPV-դրոնը ոչնչացնելու համար:.

Աղբյուրը՝ https://vk.com/wall-132159147_16705